Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Ա» ԿԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության Ասամբլեան,

գումարելով իր 39-րդ նիստը Մոնրեալում 2016 թվականի հոկտեմբերի 1-ին,

նշելով, որ մեծ թվով Պայմանավորվող պետություններ ցանկություն են հայտնել ավելացնելու Խորհրդի անդամների քանակը՝ Պայմանավորվող պետությունների ավելի լայն ներկայացուցչության հաշվին լավագույն համաչափությունը ապահովելու նպատակով,

համարելով նպատակահարմար այդ մարմնի անդամների թիվը 36-ից դարձնել 40,

անհրաժեշտ համարելով վերը նշված նպատակներով փոփոխություն կատարել 1944 թվականի դեկտեմբերի 7-ին Չիկագոյում ստորագրված՝ Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Կոնվենցիայում՝

1. հաստատում է, վերը նշված Կոնվենցիայի 94-րդ հոդվածի «ա» կետի դրույթներին համապատասխան, նշված Կոնվենցիայում հետևյալ առաջարկված փոփոխության կատարումը.

«Փոփոխել 50-րդ հոդվածի «ա» կետի 2-րդ նախադասությունը՝ «երեսունվեց» բառը փոխարինելով «քառասուն» բառով».

2. որոշում է, որ, վերը նշված Կոնվենցիայի 94-րդ հոդվածի «ա» կետի դրույթներին համապատասխան, վերը նշված փոփոխությունն ուժի մեջ է մտնում 128 Պայմանավորվող պետությունների կողմից վավերացվելուց հետո.

3. որոշում է, որ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության Գլխավոր քարտուղարը Արձանագրությունը կազմի ռուսերեն, անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն և ֆրանսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը կհամարվեն հավասարազոր՝ ներառելով վերը շարադրված փոփոխության տեքստը և հետևյալ դրույթները.

ա) Արձանագրությունն ստորագրվում է Ասամբլեայի նախագահի և Գլխավոր քարտուղարի կողմից,

բ) Արձանագրությունը բաց է վերը նշված՝ Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Կոնվենցիան վավերացրած կամ դրան միացած ցանկացած Պետության վավերացման համար,

գ) վավերագրերն ի պահ են հանձնվում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը,

դ) Արձանագրությունն այն վավերացրած Պետությունների համար ուժի մեջ է մտնում 128-րդ վավերագիրն ի պահ հանձնելու օրվանից,

ե) Գլխավոր քարտուղարն անմիջապես ծանուցում է բոլոր Պայմանավորվող պետություններին Արձանագրության յուրաքանչյուր վավերագիր ի պահ հանձնելու օրվա մասին,

զ) Գլխավոր քարտուղարը վերը նշված Կոնվենցիայի բոլոր անդամ պետություններին ծանուցում է սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա մասին,

է) Արձանագրությունը վերը նշված ժամկետից ուշ վավերացրած ցանկացած Պայմանավորվող պետության համար ուժի մեջ է մտնում վերջինիս վավերագիրը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանն ի պահ հանձնելու պահից:

Այսպիսով, որպես վերը նշված գործողությունները ձեռնարկելու արդյունք, Ասամբլեայի կողմից Գլխավոր քարտուղարը կազմեց սույն Արձանագրությունը:

Ի հավաստումն որի՝ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության 39-րդ նիստի Նախագահը և Գլխավոր քարտուղարը, լիազորված լինելով Ասամբլեայի կողմից, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Մոնրեալ քաղաքում 2016 թվականի հոկտեմբերի 6-ին՝ ռուսերեն, անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն և ֆրանսերեն կազմված միասնական փաստաթղթի տեսքով, ընդ որում՝ բոլոր լեզուներով տեքստերը հավասարազոր են: Սույն Արձանագրությունն ի պահ է հանձնվում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության արխիվներին, իսկ դրա հաստատված պատճենները կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ուղարկվում են 1944 թվականի դեկտեմբերի 7-ին Չիկագոյում ստորագրված՝ Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Կոնվենցիայի բոլոր Պայմանավորվող պետություններին:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2016թ. հոկտեմբերի 6-ին ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 50-րդ հոդվածի (a) կետում փոփոխություն կատարելու մասին արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն